ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 օգոստոսի 2025 թվականի N 1149 - Ն

ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ, ՕՊԵՐԱՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄՈՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ, ՕՊԵՐԱՏՈՐԻ ՀԵՏ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասը, 25-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերը, 26-րդ հոդվածի 3-րդ մասը, 27-րդ հոդվածի 4-րդ մասը, 28-րդ հոդվածի 2-րդ մասը, 29-րդ հոդվածի 2-րդ մասը, 30-րդ հոդվածի 5-րդ մասը, 31-րդ հոդվածի 2-րդ մասը, 32-րդ հոդվածի 3-րդ մասը և 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել խաղային գործունեության կարգավորման օպերատորի ընտրության մրցույթի անցկացման ընթացակարգը, օպերատորի ընտրության ընթացակարգին կոնսորցիումով մասնակցության կարգը, օպերատորի հետ պայմանագրի կնքման կարգը և մրցույթը չկայացած համարվելու հիմքերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2025 թվականի հուլիսի 28-ի «Խաղային գործունեության կարգավորման օպերատորի ընտրության

միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի կազմը և աշխատակարգը սահմանելու մասին» N 670-Լ որոշմամբ ձևավորված միջգերատեսչական մրցութային հանձնաժողովը սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում պետք է հայտարարի Խաղային գործունեության կարգավորման օպերատորի ընտրության մրցույթ:

3. Սահմանել, որ օպերատորի առաջին ընտրությունն անցկացվում է սույն որոշման հավելվածի 87-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված՝ որակի և արժեքի վրա հիմնված ընտրության գնահատման եղանակով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

15.08.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ